*«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ*

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

# ԴԱՍԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԵԹՈԴ

*Մասնակից՝ Տաթևիկ Բարսեղյան*

*Առարկա՝ անգլերեն*

*Ուսումնական հաստատություն՝ «Այբ» դպրոց*

ԵՐԵՎԱՆ, 2023

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……3

Գրականության ակնարկ…… *5*

Դասի հետազոտում մեթոդի օգտագործումը «Այբ» տարրական դպրոցում……8

Եզրակացություն ……11

Գրականության ցանկ……12

Հավելված……14

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ուսուցիչների համագործակցությունը գործընկերների հետ կարևոր պայման է սովորողների արդյունավետ ուսումնառության գործընթաց կազմակերպելու գործում: Այն օգնում է կիսվել լավագույն փորձով, առաջ բերել սովորողների մոտ առկա մարտահրավերներն ու խնդիրները, քննարկել դրանք և գտնել լավագույն լուծում, նպաստում է ուսուցիչների մոտ ստեղծարար մտքերի առաջացմանը և այլն: Այս ամենը խթան է հանդիսանում ուսուցիչների մասնագիտական որակների զարգացման համար, որն էլ նպաստում է սովորողի՝ ավելի լավ վերջնարդյունքի հասնելուն:

Ուսուցիչների համագործակցությունը տեղի է ունենում, երբ վերջիններս աշխատում են միասին՝ ստեղծելու արդյունավետ դասապլաններ, քննարկում են իրենց մտահոգությունը սովորողի առաջադիմության, վարքի մասին, դիտարկում են սովորողի հավանական դժվարություններն ու մշակում առաջընթացի քայլեր, ինչպես նաև առաջարկում են օգնություն և քաջալերում միմյանց: Ստեղծվում է առողջ միջավայր, որը նվազեցնում է ուսուցչի լարվածություն և նպաստում սովորողի արդյունավետ ուսումնառությանը (Saka & Awolo, 2021).

Գաղտնիք չէ, որ ուսուցչների արդյունավետ համագործակցություն կազմակերպելու գործընթացում կարող են առաջ գալ մի շարք խնդիրներ: Դրանցից մի քանիսը կարող են կապված լինել ուսուցչի ծանրաբեռնվածության հետ, նրա՝ գործընկերների հետ փորձի փոխանակման ցանկության բացակայության հետ, ինչպես նաև դպրոցի կազմակերպչական գործունության մեջ առկա թերությունների և բացթողումների հետ: Այս ամենը կարելի է շտկել՝ հստակ գիտակցելով համագործակցության բարձր արդյունավետությունը թե՛ ուսուցչի մասնագիտական հմտությունների զարգացման, թե՛ աշակերտների ուսումնառության արդյունավետության գործում, և հստակ քայլեր մշակել դրա իրագործման համար:

Գոյություն ունեն ուսուցիչների համագործակցության ֆորմալ և ոչ ֆորմալ բազմաթիվ ձևեր, որոնցից կարելի է նշել թիմային դասավանդումը, աջակցող դասավանդումը, զուգահեռ դասավանդումը, որոնք համարվում են դասավանդման ֆորմալ ձևեր, և լավագույն փորձի փոխանակումը, գաղափարների կիսումը, համագործակցային պլանավորում և այլն, որոնք էլ պարբերաբար տեղի են ունենում դասավանդման ընթացքում առանց որևէ փաստաթղթային ամրագրման: Ուսուցիչների համագործակցության ձևերից է նաև դասի հետազոտում մեթոդը:

Դասի հետազոտումը համագործակցության վրա հիմնված ուսուցչի մասնագիտական զարգացման մեթոդ է, որը թույլ է տալիս ուսուցիչներին անդրադարձ կատարել իրենց

դասավանդման գործընթացին՝ համատեղ դասապլան մշակելու, դասալսումներ անելու և սովորողների ուսումնառությանը հետևելու ցիկլային գործընթացի միջոցով (Lenski & Caskey, 2009) :

**Հետազոտության նպատակն է՝**

Խթանել «Այբ» տարրական դպրոցի ուսուցիչների մասնագիտական զարգացումը կիրառելով դասի հետազոտում համագործակցային մեթոդը:

Հետազոտության նպատակին հասնելու համար սահմանվել են հետևյալ խնդիրները՝

1. Վերհանել դասի հետազոտում մեթոդի կիրառման արդյունավետ ուղիները
2. Մշակել մեթոդի կիրառման քայլաշարը և կիրառել այն
3. Բացահայտել մեթոդի կիրառման ազդեցությունը ուսուցիչների համագործակցության և մասնագիտական զարգացման վրա
4. Վերհանել մեթոդի կիրառման ընթացքում ի հայտ եկած խոչընդոտները
5. Վերլուծել և ներկայացնել հետազոտության արդյունքներն ու ներկայացնել հետագա առաջարկությունները:

**Հետազոտության թեմայի արդիականությունը:** Թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ թե՛ ամբողջ աշխարհը, և թե՛ կրթության ոլորտը անընդհատ փոփոխության են ենթարկվում: Այսպիսով, որպեսզի ուսուցիչը կարողանա քայլել և գործել ժամանակի և նոր սերունդների պահանջների համընթաց, նա պետք է զբաղվի շարունակական մասնագիտական զարգացմամբ: Մասնագիտական զարգացման ուղիներից մեկն էլ, ինչպես արդեն նշվեց, ուսուցիչների համագործակցությունն է: Որպես արդյունավետ համագործակցության մեթոդ, այս հետազոտության միջոցով ուսուցիչները կծանոթանան դասի հետազոտում մեթոդին, դրա կիրառման քայլերին և ցանկության դեպքում կկիրառեն այն իրենց դասավանդման գործընթացում:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

### 1. Դասի հետազոտում մեթոդի ծագումնաբանությունն ու կիրառման եղանակը

Դասի հետազոտում մեթոդը մշակվել է Ճապոնիայում և կիրառվել է տասնամյակներ շարունակ Ճապոնիայի ուսուցիչների կողմից ուսումնասիրելու իրենց դասավանդման պրակտիկան (Fernandez & Yoshida, 2004): Ամերիկայի Միացյալ Նահանգների կրթության ոլորտի ներկայացուցիչները, որոնք ուսումնասիրում էին Ճապոնիայում մաթեմատիկա առարկայից սովորողների բարձր միավորներ ունենալու պատճառները, եկան այն եզրակացության, որ դա կարող է լինել այս մեթոդի օգտագործման շնորհիվ (Lenski & Caskey, 2009): Այս մեթոդը ներկայացվեց Հյուսիսային Ամերկայում Ստիգլեր և Հիպերթի (1999) դասավանդման միջազգային մեթոդներ գրքի միջոցով: Այսօր դասի հետազոտում մեթոդը մասնագիտական զարգացման ամենաարագ զարգացող մեթոդներից մեկն է:

Դասի հետազոտում կատարելիս՝ ուսուցիչները համախմբված ուսումնասիրում են դասավանդման պրակտիկան ուշադրության կենտրոնում պահելով սովորողի սովորելու գործընթացը: Գաղափարը հետևյալն է՝ ուսուցիչները համախմբվում են աշակերտների ուսումնառության հետ կապված իրենց հուզող խնդրի շուրջ, պլանավորում են դաս, որի ընթացքում տեսանելի է դառնում այդ խնդիրը, դասալսումներ են անում, ուսումնասիրում, տվյալներ են հավաքում սովորողի ուսումնառության ընթացքի մասին և քննարկում են արդյունքները: Պլանավորելու ընթացքում ուսուցիչները կանխատեսումներ են անում սովորողների հավանական պատասխանների և դրանց հիմքում ընկաց մտավոր գործընթացների մասին: Արդյունքները քննարկելուց հետո, ըստ անհրաժեշտության, փոփոխություններ են անում դասապլանի մեջ և կրկին փորձարկում այն: Այս քայլի նպատակն է ոչ թե կատարյալ դաս պլանավորել, այլ փորձարկել դասավանդման ինչ-որ մեթոդ հենց տեղում և ուսումնասիրել, ինչպես են սովորողները սովորում (Murata, 2011): Այս ցիկլը կարող է մի քանի անգամ կրկնվել՝ կախված նպատակից և դրանց հասնելու բարդությունից: Հետագայում խորհուրդ է տրվում գործածել մշակված դասապլանը սովորողների մեկ ուրիշ խմբի հետ: Գծապատկեր 1-ում ներկայացված է դասի հետազոտման քայլաշարը:

*Գծապատկեր 1.* Դասի Հետազոտման Ցիկլ*




Այսպիսով, դասի հետազոտում մեթոդը թույլ է տալիս ուսուցիչներին զարգացնել իրենց մասնագիտական հմտությունները համագործակցության միջոցով: Այն հնարավորություն է ստեղծում հետևել և բարելավել սովորողների ուսումնառության գործընթացը միասնական մշակված քայլերի շնորհիվ:

## 2. Դասի հետազոտում մեթոդի արդյունավետությունը ուսուցիների մասնագիտական զարգացման գործընթացում

Տարբեր ժամանակահատվածներում մի շարք հետազոտություններ են արվել՝ պարզելու դասի հետազոտում մեթոդի ազդեցությունը ուսուցիչների մասնագիտական զարգացման վրա: Լին (2008) ուսումնասիրել է ուսուցիչների մասնագիտական զարգացումը այս մեթոդի օգտագործման ժամանակ: Նա պարզել է, որ ուսուցիչների մոտ զարգացել են իրենց առարկայական գիտելիքն ու մանկավարժական հմտությունները: Նրանք ավելի խոր ինքնանդրադարձ են արել և ավելի մոտիկից են առնչվել սովորողների կարիքներին: Սակայն այս ամենի հետ, ուսուցիչները նշել են, որ նրանց մոտ բարձրացել է լարվածությունը ավել ծանրաբեռնվածությունից:

Լոուն և Ցուին (2007) հետազոտության մեջ ներառել էին դասախոսներ, մենթորներ և սկսնակ ուսուցիչներ: Արդյունքները ցույց տվեցին, որ այս մեթոդը դրական հսկա ազդեցություն ունեցել ոչ միայն սկսնակ ուսուցիչների, այլև բոլոր ներառված մասնագետների համար:

*Վերցված և փոփոխված Murata, 2011

Մեկ այլ հետազոտության ընթացքում (Lenski & Caskey, 2009) չորս տարբեր դպրոցների ուսուցիչներ են մասնակցել հետազոտությանը: Նրանք բոլորը որպես թիրախ վերցրել են սովորողների ներգրավվածությունը դասին, քանի որ խնդիրներ են ունեցել դրա հետ կապված: Ուսուցիչները միասին մշակել են քայլեր և գնահատման սանդղակներ, որոնք կօգնեն տեսնել սովորողների ներգրավվածության աստիճանը: Յուրաքանչյուր խմբում մեկ ուսուցիչ վարել է դասը, մյուսները դասալսել, ուշադրություն դարձնելով ոչ թե ուսուցչի դասավանդմանը, այլ սովորողների սովորելու գործընթացին՝ գնահատելով նրանց նախապես մշակված գնահատման սանդղակով: Դասից հետո, ուսուցիչները անդրադարձ են կատարել, քննարկել սովորողների ներգրավվածության աստիճանը, դուրս հանել դասի ուժեղ կողմերը և այն կետերը, որոնք կարելի էր վերանայել: Արդյունքում խումբը վերանայում է դասապլանը և կիսվում դրանով դպրոցի կայքում, որպես օրինակելի դաս: Արդյունքում հետազոտության մասնակիցները նշում են, որ այս մեթոդը օգնել է իրենց սովորել միմյանցից, նպաստել նրանց մտավոր ներգրավվածության բարձրացմանը, օգնել է ավելի մոտենալ սովորողների կարիքներին և զարգացրել իրենց համագործակցային հմտությունները:

Դասի հետազոտում մեթոդը օգնում է նաև զարգացնել մասնագիտական գիտելիքը, և, ի տարբերություն այլ մեթոդների, այն նպաստում է գիտելիքի տարբեր տեսակներ զարգացմանը (Fernandez, 2005):

## ԴԱՍԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ «ԱՅԲ» ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Վերջին տարիներին «Այբ» դպրոցում լայն կիրառում է գտել համագործակցային ուսուցումը: Այն ապահովում է սովորողների դրական փոխկապակցվածությունը, հավասար մասնակցությունը, զարգացնում է անհատական պատասխանատվությունը, և իրականացնում համաժամանակյա փոխներգործություն: Դպրոցը կարևոր է համարում համագործակցային ուսուցման հինքը դնել տարրական դպրոցից, որպեսզի պահանջվող հմտությունները զարգանան երեխայի ընդհանուր զարգացմանը զուգահեռ: Այդ պատճառով դասի հետազոտման թիրախ է ընտրվել համագործակցային ուսուցման «Talking Mat” մեթոդը:

Որպես հետազոտվող դասարան ընտրվել է չորրորդ դասարանը: Հետազոտությանը մասնակցել են չորրորդ դասարանում դասավանդող անգլերենի երկու ուսուցիչներ:

Դասի հետազոտման առաջին փուլում անգլերենի ուսուցիչները ընդհանուր քննարկման արդյունքում կազմել են դասապլան (տե՛ս Հավելված 1, Դասապլան 1), որի թիրախում սովորողների համագործակցային հմտությունների ձևավորումն էր «Talking Mat” մեթոդի կիրառմամբ: Ուսուցիչները ուշադրության կենտրոնում էր նաև սովորողների սովորելու գործընթացը, նրանց ներգրավվածությունը դասին և ուսումնառության ընթացքը: Ընդհանուր քննարկման ընթացքում ուսուցիչները կանխատեսումներ են անում սովորողների հավանական պատասխանների, հնարավոր խոչընդոտների մասին և փորձում են նախապես լուծումներ գտնել: Առաջին դասի հետազոտումը տեղի է ունենում առաջիկա անգլերենի ժամին, երբ ուսուցիչներից մեկը կիրառում է մեթոդը, իսկ մյուսը հետևում է դասի ընթացքին՝ ուշադրության կենտրոնում ունենալով սովորողների մոտ համագործակցային հմտությունների ձևավորումը, նրանց ներգրավվածությունն ու սովորելու գործընթացը: Դասի ավարտից հետո ուսուցիչները սկսում են քննարկել դասի ընթացքը՝ կենտրոնանալով դասի թե՛ ուժեղ կողմերի, թե՛ առաջացած դժվարությունների վրա: Հետազոտող ուսուցիչը նշում է, թե երբ էին սովորողներն ավելի ներգրավված և երբ էին ավելի պասիվ, ինչը հեշտությամբ կատարեցին, ինչը՝ ոչ: Դասը վարող ուսուցիչը նույնպես կիսվում է իր կարծիքով: Ընդհանուր քննարկման ընթացքում որոշ փոփոխություններ են կատարվում նախնական դասապլանում, և նոր դասապլանը (տե՛ս Հավելված 2, Դասապլան 2) կիրառվում է մյուս ուսուցչի կողմից: Դասի հետազոտումից հետո կրկին ուսուցիչները հանդիպում և քննարկում են դասը՝ կրկին որոշակի փոփոխություններ կատարելով (տե՛ս Հավելված 3, Դասապլան 3): Արդյունքում ուսուցիչները մշակում են տարրական դպրոցում «Talking Mat” մեթոդի կիրառման

արդյունավետ օրինակելի դասապլան, որը կօգնի իրենց և մյուս ուսուցիչներին կիրառել համագործակցային ուսուցում սկսած սովորողների վաղ տարիքից:

## Դասի Հետազոտում Մեթոդը՝ Ուսուցիչների Համագործակցության Եվ Մասնագիտական Զարգացման Տեսանկյունից

Դասի հետազոտում մեթոդը կիրառելուց հետո անգլերենի երկու ուսուցիչները հարցադրում են անցել մեթոդի արդյունավետության, դրա կիրառման դժվարությունների, խոչընդոտների, ինչպես նաև մասնագիտական զարգացման տեսանկյունից մեթոդի ազդեցության վերաբերյալ (տե՛ս Հավելված 4, Հարցաշար): Նրանց պատասխանները որակական վերլուծության են ենթարկվել: Հիմնվելով վերջիններիս վրա՝ դասի հետազոտում մեթոդը դրական համագործակցության մթնոլորտ է ստեղծել ուսուցիչների մոտ: Կիսելով միևնույն նպատակը և միահամուռ աշխատելով այդ ուղղությամբ՝ ուսուցիչները կարողացել են դուրս բերել թերություններ, որոնք այլապես չէին կարող տեսնել: Սկսած հետազոտման առաջին փուլից՝ դասապլանի կազմումից, ուսուցչները նշում են դրական փոխներգործություն. գործընկերոջ մասնագիտական փորձը, գաղափարների փոխանակումը, խնդիրների կանխատեսումն ու լավագույն լուծումներ գտնելու քայլերը դրական համագործակցության մթնոլորտ են ստեղծել ուսուցիչների մոտ:

Ինչ վերաբերվում է ուսուցիչների մասնագիտական զարգացմանը, վերջիններս նշեցին, որ կարևոր նշանակությունը ուներ գործընկերների ներկայությունը դասին, որը թույլ էր տալիս ուշադրությամբ հետևել սովորողների ներգրավվածությանն ու ուսումնառության գործընթացին: Դասի քննարկման արդյունքում ուժեղ կողմերի վերհանումը, թերությունների բացահայտումը, դրանց վերացմանը ուղղված լուծումներ գտնելու միասնական ջանքերը նպաստել են ուսուցիչների մտավոր ներգրավվածության բարձրացմանը: Արդյունքում հետազոտության մասնակիցները նշում են, որ այս մեթոդը օգնել է իրենց սովորել միմյանցից, ավելի մոտենալ սովորողների կարիքներին և զարգացրել իրենց համագործակցային հմտությունները:

Ինչ վերաբերվում է առաջ եկած խնդիրներին և խոչընդոտներին՝ հետազոտության մասնակիցները նշում են, որ ծանրաբեռնվածության պատճառով դժվար էր ժամանակ գտնել դասալսումների, դասապլան կազմելու, քննարկումների և մնացած քայլերի համար: Պահանջվում էր գործընկերների աջակցությունը այս ամենը կազմակերպելու համար, որը երբեմն լարվածություն և ծանրաբեռնվածության զգացողություն էր առաջացնում: Ուսուցիչները նշեցին նաև, որ դասի հետազոտման ընթացքում կարող է

նաև լարվածություն առաջանալ ուսուցիչների՝ միմյանց բավականին լավ չճանաչելու, դասալսում ունենալու, ուսուցիչների կարծիքները չհամընկնելու և այլ պատճառներով:

Ի պատասխան այն հարցի՝ արդյոք ուսուցիչները խորհուրդ կտան իրենց գործընկերներին կիրառել դասի հետազոտում մեթոդը, նրանք միանշանակ դրական պատասխան տվեցին, նշելով, որ եթե ուսուցիչները տարբեր մեթոդներ փորձարկելու ընթացքում կատարեն դասի հետազոտում, դա նրանց թույլ կտա որոշակի կարճ ժամանակահատվածում միահամուռ ուժերով կազմել տվյալ մեթոդի կիրառման արդյունավետ քայլաշարը, որը հետագայում օրինակելի նմուշ կլինի ոչ միայն իրենց, այլև մյուս ուսուցիչների համար:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրելով դասի հետազոտում մեթոդի կիրառման փորձը, կիրառելով այն «Այբ» տարրական դպրոցում և վերլուծելով հետազոտության մասնակիցների կարծիքը դրա վերաբերյալ՝ կարելի է եզրակացնել, որ դասի հետազոտում մեթոդը դրական համագործակցային մթնոլորտ է ստեղծում, որը նպաստում է ուսուցիչների համագործակցային հմտությունների զարգացմանը, մասնագիտական փորձի հարստացմանը, գիտելիքների փոխանակմանը, ինչպես նաև ավելի խոր ինքնաարնդրադարձ անելուն:

Չնայած այն հանգամանքին, որ այս մեթոդը բավականին ժամանակատար է, ուսուցիչները նշում են, որ դասի հետազոտման արդյունքները բավականին խոստումնալից են: Այս մեթոդի շնորհիվ կարելի է կարճ ժամանակահատվածում փորձարկել նոր մեթոդներ և գտնել կիրառման լավագույն եղանակներ: Բացի այդ, այս մեթոդը թույլ է տալիս հետազոտել սովորողների սովորելու գործընթացն ու բարձացնել նրանց ներգրավվածությունը:

Դասի հետազոտում մեթոդի կիրառման ժամանակ խորհուրդ է տրվում կազմել երեք կամ չորս ուսուցիչներից բաղկացած խմբեր, որպեսզի համագործակցությունն ավելի արդյունավետ լինի: Պետք է նշել, որ տվյալ հետազոտությանը մասնակցում էին երկու անգլերենի ուսուցիչ: Կարելի է ենթադրել, որ համագործակցությունն ավելի արդյունավետ կարող էր լինել, եթե ևս մեկ ուսուցիչ միանար հետազոտությանը: Այդ դեպքում հնարավոր էր ավելի բազմապիսի մտքերի փոխանակում, ավելի շատ առաջարկությունների ներկայացում, ավելի մեծ փորձի փոխանակում և այլն: Այնուամենայնիվ, պետք է նաև ի նկատի ունենալ, որ մեծ խմբերի դեպքում էլ կարող են առաջանալ այլ խնդիրներ, ինչպիսին են տարաձայնություններ ուսուցիչների միջև, ծանրաբեռնվածություն և այլն:

Ուսումնական հաստատությունները կարող են կիրառել դասի հետազոտում մեթոդը՝ զարգացնելու ուսուցիչների և դասավանդողների մասնագիտական գիտելիքներն ու համագործակցային հմտությունները: Սակայն այս դեպքում պետք է ի նկատի ունենալ, որ ուսուցիչներին պետք է աջակցել՝ փորձելով նվազեցնել նրանց ծանրաբեռնվածությունը տվյալ ժամանակահատվածում:

Հետաքրքիր կլինի նաև այս մեթոդի կիրառումը ոչ միայն միևնույն դպրոցում աշխատող, այլև տարբեր դպրոցներում աշխատող ուսուցիչների կողմից: Այն կնպաստի դպրոցների միջև համագործակցության զարգացմանն ու լավագույն փորձի փոխանակմանը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


Fernandez, C., & Yoshida, M. (2004). Lesson study: A case of a Japanese approach to improving instruction through school-based teacher development. Mahwah: Lawrence Erlbaum.

Fernandez, C. 2005. Lesson Study: A means for elementary teachers to develop the knowledge of mathematics needed for reform-minded teaching. *Mathematical thinking and learning, 7*(4), 265-289*.*

Law, Y. K., & Tsui, A. B. M. (2007). Learning as boundary-crossing in school–university partnerships. Teaching and Teacher Education, 23, 1289–1301

Lee, J. F. K. (2008). A Hong Kong case of lesson study—Benefits and concerns. Teaching and Teacher Education, 24, 1115–1124

Lenski, S. J., & Caskey, M. M. (2009). Using the Lesson Study Approach to Plan for Student Learning. *Middle School Journal*, 40(3), 50-57.

Murata, Aki. (2011). Introduction: Conceptual Overview of Lesson Study. Lesson Study Research and Practice in Mathematics Education: Learning Together. 10.1007/978-90-481-9941-9_1.

Saka, A. O., & Awolo, B. O. (2021). Collaborative Testing on Students' Achievement and Retention of Chemistry Concepts: An Exploratory Study in the Field of Science Education for Sustainable Development. *International Journal*, *7*(1), 79-97.

Stigler, J. W., & Hiebert, J. (1999). The teaching gap: Best ideas from the world's teachers for improving education in the classroom. New York: Summit Books

**Հավելված 1**

Դասապլան 1

| *Առարկա՝ English* | English | Ամսաթիվ | 25_09_23 | Կիսամյակ | 1 | Դասարան | 4 |
|---|---|---|---|---|---|---|---|
| Խմբի բացվածք՝ | Աղջիկ: 5 Տղա: 7 ՇՏ ՈՒՀԿ: | | | | | | |
| Թեմա՝ | ***Jane's Clever Idea*** | | | | | | |
| Օգտագործվող նյութեր՝ | *"Story Fun 4" Student's book, A3 papers* | | | | | | |
| Ամբողջական պատկեր՝ | *The book "Story Fun" contains illustrated stories followed by fun activities, songs, and questions that practice grammar, vocabulary, and language skills. Usually, Ss read each story in two parts, do the tasks following it, and then retell the whole text.*<br>*"Jane's Clever Idea" is the first story in the book. Ss have read the story, have discussed it, and written the target vocabulary. They were assigned to read the whole story at home. During the lesson, Ss will revise the vocabulary, and ask and answer questions in a collaborative activity.* | | | | | | |
| Դասի նպատակը՝ | *To improve Ss' reading skills*<br>*To consolidate the target vocabulary through practice*<br>*To foster writing and speaking skills based on the covered material*<br>*To improve collaborative learning skills* | | | | | | |

| | Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ |
|---|---|
| **Վերջնարդյունքները** | *The students will be able*<br>• *to read the text fluently*<br>• *to use the target vocabulary in writing and speaking*<br>• *to work collaboratively* |
| **Կապը առարկայի չափորոշչային վերջնարդյունքների հետ** | ՕԼ3-Հ-Ը.2<br>ՕԼ3 –Հ-ՈՒ-2<br>ՕԼ3-Հ-Մ.3<br>ՕԼ3-Հ-Փ.3 |
| **Կապը հանրակրթության պետական չափորոշիչի հետ** | *S 24*<br>*S 28* |

| Ուսուցչի զարգացման ընթացիկ նպատակները | Նպատակներին հասնելու ռազմավարությունը |
|---|---|
| *Collaborative learning* | *Forming groups, assigning roles, and monitoring the process.* |

| Գործողություններ (ժամ/տևողություն) | Ուսումնական գործունեություն<br><br>*Աշակերտներ* | Պլանավորած տարբերակում և ՈՒՆԳ ռազմավարություններ<br><br>*Ուսուցիչ* | Առանցքային հարցեր<br><br>Հիմնական ստուգումներ<br><br>(հանձնարարության վերջնարդյունքը նպաստում է դասի նպատակին) |
|---|---|---|---|
| **2 mins** | *Listen to a song and get ready for the lesson.* | *Get ready for the lesson. Greet students.* | |
| **10 mins** | *In turns, read the story.* | *Give instructions: ask random students to read.* | |
| **5 mins** | *Form groups and listen to the task.* | *Explain the task; give Ss A3 size papers and markers of different colors (each group gets a different color). Tell them that in groups they are going to write down some* | |

| | | | |
|---|---|---|---|
| **3 mins** | *In groups, take an A3 size paper and write words from the story (each student 3 words).* | *words from the story. Each student needs to write three words, and the words should not be repeated. Guide and monitor the process.* | |
| **8 min** | *In groups, change their seats. Go to the other group's desk. Write two questions about the story on the group's paper. The cycle continues until all the groups are back in their seats.* | *Observe. Keep the time. Monitor the process.* | |
| **10 mins** | *Read the questions, and in turns, answer them. Get feedback from the teacher.* | *Monitor, and give feedback.* | |
| **2 mins** | *Listening to the homework instruction* | *Wrap up the lesson. Give homework.* | |

| | | | |
|---|---|---|---|
| | . | | |
| Տերմիններ<br><br>Գրագիտություն | *A helmet, a swimsuit, a pair, a present.*<br><br>*Writing words and questions* | | |
| Գնահատում | *Formative Assessment: questioning, observing, giving oral feedback* | | |
| Տնային աշխատանք | *Ss need to retell the story.* | | |

| | |
|---|---|
| | |
| **Ինքնաանդրադարձ** | Overall, the lesson went well. Students were able to recall words from the story and write them down. However, they wanted to write more words than they were assigned to, so they were a little disappointed.<br><br>Ss worked in groups and each of them realized his/her role in the group. After that, Ss practiced making up questions about the story. In this activity, Ss had some problems as they hadn't covered questions in the past tense. Students also in turn answered the questions of their peers. So, they worked collaboratively and practiced the target language. |

**Հավելված 2**

Դասապլան 2

| *Առարկա՝ English* | **English** | **Ամսաթիվ** | **28_09_23** | **Կիսամյակ** | **1** | **Դասարան** | 4 |
|---|---|---|---|---|---|---|---|
| **Խմբի բացվածք՝** | Աղջիկ: 6 | Տղա: 9 | ՇՏ | ՈՒՀԿ: | | | |
| **Թեմա՝** | ***Jane's Clever Idea*** | | | | | | |
| **Օգտագործվող նյութեր՝** | *"Story Fun 4" Student's book, A3 papers* | | | | | | |

| | |
|---|---|
| **Ամբողջական պատկեր՝** | *The book "Story Fun" contains illustrated stories followed by fun activities, songs, and questions that practice grammar, vocabulary, and language skills. Usually, Ss read each story in two parts, do the tasks following it, and then retell the whole text.*<br><br>*"Jane's Clever Idea" is the first story in the book. Ss have read the story, have discussed it, and written the target vocabulary. They were assigned to read the whole story at home. During the lesson, Ss will revise the vocabulary, and ask and answer questions in a collaborative activity.* |
| **Դասի նպատակը՝**<br><br>**Կապը առարկայի չափորոշչային վերջնարդյունքների հետ**<br><br>**Կապը հանրակրթության պետական չափորոշիչի հետ** | *To improve Ss' reading skills*<br><br>*To consolidate the target vocabulary through practice*<br><br>*To foster writing and speaking skills based on the covered material*<br><br>*To improve collaborative learning skills*<br><br>ՕԼ3-Հ-Ը.2<br><br>ՕԼ3 –Հ-ՈՒ-2<br><br>ՕԼ3-Հ-Մ.3<br><br>ՕԼ3-Հ-Փ.3<br><br>*S 24*<br><br>*S 28* |
| | **Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ** |

| | |
|---|---|
| **Վերջնարդյունքները** | *The students will be able*<br>• *to read the text fluently*<br>• *to use the target vocabulary in writing and speaking*<br>• *to work collaboratively* |

| **Ուսուցչի զարգացման ընթացիկ նպատակները** | **Նպատակներին հասնելու ռազմավարությունը** |
|---|---|
| *Collaborative learning* | *Forming groups, assigning roles, and monitoring the process.* |

| Գործողություններ (ժամ/տևողություն) | Ուսումնական գործունեություն<br><br>*Աշակերտներ* | Պլանավորած տարբերակում և ՈՒՆԳ ռազմավարություններ<br><br>*Ուսուցիչ* | Առանցքային հարցեր<br><br>Հիմնական ստուգումներ<br><br>(հանձնարարության վերջնարդյունքը նպաստում է դասի նպատակին) |
|---|---|---|---|
| **2 mins** | *Listen to a song and get ready for the lesson.* | *Get ready for the lesson. Greet students.* | |
| **10 mins** | *In turns, read the story.* | *Give instructions: ask random students to read.* | |
| **5 mins** | *Form groups and listen to the task.* | *Explain the task; give Ss markers of different colors (each group gets a different color) and A3 size papers. Tell the Ss that in groups they are going to write* | |

| | | | |
|---|---|---|---|
| **3 mins** | *In groups, take an A3 size paper and write words from the story.* | *words from the story. They need to write as many words as they can remember. The words should not be repeated. Give them 3 minutes and keep the time.* | |
| **8 min** | *In groups, change their seats. Go to the other group's desk. First, add some words from the story. Then, choose two questions, write them on the group's A3 paper. The cycle continues until all the groups are back in their seats.* | *Tell Ss that the groups need to exchange their seats. After that they need to add some new words from the story to the words of the other group. Give them 2 minutes to write the words.* *Provide the questions about the story. Observe. Keep the time.* | |
| **10 mins** | *Read the questions and in turn, answer them. Get feedback from the teacher.* | *Monitor the process.* *Give oral feedback.* | |
| **2 mins** | *Listening to the homework instruction* | *Wrap up the lesson. Give homework.* | |

| | | | |
|---|---|---|---|
| | . | | |
| Տերմիններ | *A helmet, a swimsuit, a pair, a present.* | | |
| Գրագիտություն | *Writing words and questions* | | |
| Գնահատում | *Formative Assessment: questioning, observing, giving oral feedback* | | |
| Տնային աշխատանք | *Ss need to retell the story* | | |

| | |
|---|---|
| **Ինքնաանդրադարձ** | The lesson went well. Students were able to recall as many words as possible from the story and write them down. Ss worked in groups and each of them realized his/her role in the group. After that, Ss read their peers' words, added some to them, and once again revised the words. After that, they chose two questions from the list and wrote them down for their peers to answer. Eventually, each group had four questions. Students in turn answered the questions of their peers. So, they worked collaboratively and practiced the target language.<br><br>Next time the groups can give feedback to each other instead of the teacher. This will foster their engagement and attention. |

**Հավելված 3**

Դասապլան 3

| *Առարկա՝ English* | **English** | **Ամսաթիվ** | | **Կիսամյակ** | 1 | **Դասարան** | 4 |
|---|---|---|---|---|---|---|---|
| **Խմբի բացվածք՝** | Աղջիկ: 5 | Տղա: 7 | | ՇՏ | | ՈՒՀԿ: | |
| **Թեմա՝** | ***Jane's Clever Idea*** | | | | | | |
| **Օգտագործվող նյութեր՝** | *"Story Fun 4" Student's book, A3 papers* | | | | | | |

| | |
|---|---|
| **Ամբողջական պատկեր՝** | *The book "Story Fun" contains illustrated stories followed by fun activities, songs, and questions that practice grammar, vocabulary, and language skills. Usually, Ss read each story in two parts, do the tasks following it, and then retell the whole text.*<br><br>*"Jane's Clever Idea" is the first story in the book. Ss have read the story, have discussed it, and written the target vocabulary. They were assigned to read the whole story at home. During the lesson, Ss will revise the vocabulary, and ask and answer questions in a collaborative activity.* |
| **Դասի նպատակը՝** | *To improve Ss' reading skills*<br><br>*To consolidate the target vocabulary through practice*<br><br>*To foster writing and speaking skills based on the covered material*<br><br>*To improve collaborative learning skills* |
| **Կապը առարկայի չափորոշչային վերջնարդյունքների հետ** | ՕԼ3-Հ-Ը.2<br><br>ՕԼ3 –Հ-ՈՒ-2<br><br>ՕԼ3-Հ-Մ.3<br><br>ՕԼ3-Հ-Փ.3 |
| **Կապը հանրակրթության պետական չափորոշիչի հետ** | S 24<br><br>S 28 |
| | **Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ** |

| | |
|---|---|
| Վերջնարդյունքները | *The students will be able*<br>• *to read the text fluently*<br>• *to use the target vocabulary in writing and speaking*<br>• *to work collaboratively* |

| Ուսուցչի զարգացման ընթացիկ նպատակները | Նպատակներին հասնելու ռազմավարությունը |
|---|---|
| *Collaborative learning* | *Forming groups, assigning roles, and monitoring the process.* |

| Գործողություններ (ժամ/տևողություն) | Ուսումնական գործունեություն<br><br>*Աշակերտներ* | Պլանավորած տարբերակում և ՈՒՆԳ ռազմավարություններ<br><br>*Ուսուցիչ* | Առանցքային հարցեր<br><br>Հիմնական ստուգումներ<br><br>(հանձնարարության վերջնարդյունքը նպաստում է դասի նպատակին) |
|---|---|---|---|
| **2 mins** | *Get ready for the lesson.* | *Get ready for the lesson.*<br>*Greet students.* | |
| **10 mins** | *In turns, read the story.* | *Give instructions: ask random students to read.* | |
| **5 mins** | *Form groups and listen to the task.* | *Explain the task; give Ss markers of different colors (each group gets a different color) and A3 size papers. Tell the Ss that in groups they are going to write* | |

| | | | |
|---|---|---|---|
| **3 mins** | *In groups, take an A3 size paper and write words from the story.* | *words from the story. They need to write as many words as they can remember. The words should not be repeated. Give them 3 minutes and keep the time.* | |
| **8 min** | *In groups, change their seats. Go to the other group's desk. First, add some words from the story. Then, choose two questions, write them on the group's A3 paper. The cycle continues until all the groups are back in their seats.* | *Tell Ss that the groups need to exchange their seats. After that they need to add some new words from the story to the words of the other group. Give them 2 minutes to write the words.* *Provide the questions about the story. Observe. Keep the time.* | |
| **10 mins** | *Read the questions and in turn, answer them. Give feedback to their classmates.* | *Monitor the process.* | |
| **2 mins** | *Listening to the homework instruction* | *Wrap up the lesson. Give homework.* | |

| | | | |
|---|---|---|---|
| | . | | |
| Տերմիններ | *A helmet, a swimsuit, a pair, a present.* | | |
| Գրագիտություն | *Writing words and questions* | | |
| Աջակցություն | *N/A* | | |
| Գնահատում | *Formative Assessment: questioning, observing, giving oral feedback* | | |

| | |
|---|---|
| Տնային աշխատանք | |

**Հավելված 4**

Հարցաշար

1. Can you describe your experience with lesson study and how it has influenced your teaching methods?

2. What specific goals or objectives were set for your lesson study group, and were they achieved?

3. Have you observed any changes in your students' learning outcomes or engagement because of lesson study?

4. What challenges or obstacles did you encounter while implementing lesson study, and how did you overcome them?

5. In your opinion, how does lesson study compare to other professional development approaches in terms of effectiveness?

6. Can you provide examples of specific improvements in your teaching practice that have emerged from lesson study?

7. What recommendations or advice do you have for educators who are considering implementing lesson study in their professional development?